ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 17/17.4/32053-2025 «02» 10 2025թ.

«ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԱՆԱՀԻՏ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ
(ՀՀ, ք. Երևան, Գ. Աղաբաբյան փ. 1/26)

Հարգելի տիկին Առաքելյան,

ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) և «Լուքսորիա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2025 թվականի հունվարի 16-ին կնքվել է պետության կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-25/10-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1-ի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1, 1.1 և 1.2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Աշխատակազմը՝ 08.08.2025թ. թիվ 02/25960-2025 գրությամբ դիմելով Կատարողին հայտնել է, որ վերջինիս կողմից Պայմանագրի 1, 1.1, 1.2 հավելվածներով նախատեսված ծառայությունները Պայմանագրով ամրագրված ժամկետներում չեն մատուցվել: Մասնավորապես, Աշխատակազմին սպասարկող ծառայողական ավտոմեքենաները շուրջ երեք ամիս (մայիսից հուլիս ամիսներ) Կատարողի սպասարկման կենտրոնում չեն սպասարկվել և չեն նորոգվել՝ այն պատճառաբանությամբ, որ, ըստ Կատարողի, «պայմանագրով նախատեսված ծառայությունների գումարը ցածր է», ինչի արդյունքում խախտվել է Պայմանագրի 2.4.1 կետը: Ըստ այդմ, Կատարողին առաջարկվել է Պայմանագրի 1, 1.1, 1.2 հավելվածներով նախատեսված ծառայությունները մատուցել

մինչև 2025 թվականի օգոստոսի 11-ը ներառյալ, նախազգուշացնելով, որ հակառակ պարագայում Աշխատակազմը՝ ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով, միակողմանիորեն կլուծի Պայմանագիրը և Կատարողի նկատմամբ կկիրառվեն օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները: Սակայն Կատարողի կողմից որևէ գործողություն չի հետևել:

Պայմանագրի 2.1.3 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից խախտումն էական է համարվում, եթե խախտվել են ծառայության մատուցման ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-25/10 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.14 կետի համաձայն՝

- Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

- Եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ

Կատարող՝ Լ.Գասպարյան
գործերի կառավարչություն
Հեռ. 010 515 663